թաքցնել կամ տեղափոխել միւսի մէջ, եւ կամ հարեւանի մօտ ապաստան գտնել: Թաքստի համար իւրաքանչիւր տան մէջ կային ստորերկրեայ մառաններ, որոնց գաղտնի մուտքը միայն տան տիրոջն էր յայտնի:

Ասեցի, հայոց թաղի բոլորովին սպառռած ծայրումն էր քեռուս տունը, ուր մենք պատսպարան գտանք մեզ հասած դժբախտութիւնից յետոյ, այսինքն այն օրից յետոյ, երբ հօրս պարտատէրերը մեզ արտաքսեցին հայրենական տնակից: Ամենօրեայ երկիւղը, գողերի եւ աւազակների յարձակումների յաճախ կրկնութիւնը ստիպել էին կանգնել տան շրջապարիսպը, որքան կարելի է, բարձր եւ հաստ պատերով, որոնք անձրեւից եւ խոնաւութիւնից ստացել էին մուգ-կանաչ գոյն: Ժամանակի աւերող ձեռքը կիսով չափ մաշել էր շրջապարիսպի վերին մասը, բայց նա տակաւին այնքան բարձրութիւն ունէր, որ կարող էր ընդդիմադրել ամենայանդուգն յարձակման: Պատերի քայքայուած ճեղքերից բուսել էին մացառներ փշոտ ոստերով եւ մանրիկ տերեւներով, որոնց միջից կանաչ մողէսները շատ անգամ դուրս էին նայում իրանց նենգաւոր աչիկներով: Բայց ես մողէսներից չէի վախենում, երբեմն ձեռքով բռնում էի նրանց. ես վախենում էի միայն օձերից, թէեւ նրանք այնքան ընտելացած էին մեզ հետ, որ երբեք չէին կծում: Քեռուս տան մէջ այդ օձերի մասին պահուած էին խիստ հետաքրքիր աւանդութիւններ. պատմում էին, թէ նրանք թագաւոր եւ թագուհի ունեն, թէ երկուսի գլուխներն էլ գարդարած են ոսկի պսակներով, որոնք կրում են իրանց վրայ աշխարհի ամենաթանկագին գոհարները: Ասում էին, թէ իմ մեծ քեռին շատ անգամ տեսել էր նրանց, բայց չէր կամեցել խլել նրանց պսակները, որովհետեւ այդ օձերի հետ մի դիւթական կապով կապուած էր նրա տան բախտաւորութիւնը:

Գլխաւոր դուռը ներս էր տանում դէպի բաւական ընդարձակ բակը, որ հովանաւորուած էր դարեւոր թթենիներով եւ կեռասենիներով: Բակի մէկ ճակատում արեւելեան ճաշակով շինուած էին մի քանի մեծ եւ փոքրիկ սենեակներ, հնացած, քայքայուած, եւ միայն իրանց ծերութեան մէջ պահպանած հնութեան պատկառանքը: Այս տունը շինուած էր այն ժամանակ, երբ քեռուս պապը քաղաքի նշանաւոր եւ հարուստ բնակիչներից մէկն էր. հարիւրաւոր տարիներից յետոյ նա տակաւին պահպանել էր վաղեմի վայելչութիւնը: Ծառերի հետ փաթաթած խաղողի որթերը համարեա թէ գրկում էին իրանց ծոցի մէջ այդ կիսանահապետական բնակարանը, որի նմանը անտառներում կամ լեռների խուլ ձորերի մէջ միայն կարելի է տեսնել: Փողոցից հոսող վտակից բաժանուած էր մի առուակ, որ անցնում էր բակի միջով եւ ոռոգում էր ոչ